# Արձանագրություն N 2-2

## ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-25/52 ծածկագրով փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների (ավտոքաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ)) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11.09.2025թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Բարսեղյան
Ս. Մատինյան
Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Գ. Խաչատրյան

### 1. Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների և դրանց շտկման մասին

---

(Տ.Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 09.09.2025թ. ծանուցվել է **«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին**՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4 ,դեմ - 0:

### 2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

---

(Տ.Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5 ,դեմ - 0:

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Տ.Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին ։

Ընդունվել է որոշում՝ կողմ –4 ,դեմ - 0:

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

-------------------------------------------------------------------------------------------

(Տ.Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4 ,դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________________________ Տ. Ղուկասյան

Անդամներ՝

________________________________ Կ. Բարսեղյան

________________________________ Ա. Խաչատրյան

________________________________ Ս. Մատինյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ________________________________ Գ. Հակոբյան